340 Հիսո՛ւս, Դու ես իմ սերը հավիտյան,

1. Հիսո՛ւս, Դու ես իմ սերը հավիտյան,
Դու ես հոգուս ընկերը անբաժան,
Քեզ եմ հանձնել իմ կյանքը հավիտյան,
Քեզ սիրող Քո եղբայրն եմ անարժան:

2. Ահա գահիդ առջև եմ, Աստված իմ,
Օգնիր՝ Քեզ նման սիրեմ բոլորին:
Ապրի՛ր իմ մեջ Քո կյանքով հաղթական,
Ինձ դարձրո՛ւ զինվորդ մարտական:

3. Առանց Քեզ կյանքս փուչ է, սիրելի՛ս,
Խնդրում եմ, Տե՛ր, ինձ օրհնիր երգելիս,
Խոսքդ լինի միշտ ինձնից անբաժան,
Հոգով լցրո՛ւ, թեկուզ եմ անարժան:

4. Կյանքս առջևդ լինի հաճելի,
Կյանք ունենամ ես և է՛լ ավելի,
Երբ կանչես ինձ՝ ապրելու կյանք ազատ,
Ասեմ՝ գալիս եմ, եղբա՛յր հարազատ: